ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

29/11/2023

ք. Վարդենիս

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Ռոմելյա Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի դրույթներով՝ հիմք ընդունելով <<Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության>> բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի բյուջեի սոցիալական ծախսերից 4729 հոդվածից տրամադրել դրամական աջակցություն Վարդենիս համայնքի անապահով

բնակիչներ՝

1.Լարիսա Հունոյան /Վարդենիս/ 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

2.Մարգարիտ Մկրտումյան/Վարդենիս 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

3.Հովիկ խաչատրյան /Փոքր Մասրիկ/ 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

4.Մարինա Առուստամյան /Գեղամասր/ 40 000 /քառասուն հազար/ՀՀ դրամ

5.Սոֆյա Մանուկյան/Գեղամասր/ 60 000 /վասուն հազար/ՀՀ դրամ

6.Նունե Վանոյան/Փոքր Մասրիկ/ 50 000 /հիսուն հազար/ՀՀ դրամ

7.Բաբկեն Կարապետյան/Վարդենիս/ 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

8.Վիտալի Կիրակոսյան/Սոթք/ 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

9.Սարգիս Գալստյան /Վարդենիս/ 60 000 /վասուն հազար/ՀՀ դրամ

10.Շուշան Զախարյան /Փոքր Մասրիկ/ 50 000 /հիսուն հազար/ՀՀ դրամ

11.Միհր Միսեյան /Ծովակ/ 50 000 /հիսուն հազար/ՀՀ դրամ

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը նշելով, որ դիմումներից որոշ մասը իր կողմից ներայացվում է բարերարներին, ովքեր տրամադրում են աջակցություն:

Քվեարկության արդյունքում 21 կող, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 166-Ա/

Լսեցին

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԵԴ>> ՀՈԱԿ ԵՎ <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ 2 ՄԵԴ>> ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <<ը>> կետով, հիմք ընդունելով ծնողների դիմումները և Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵ և ՍԱ բաժնի կատարած տնայց ուսումնասիրությունների արդյունքը՝ համայնքի ավագանին որոշում է.

Չիջել 2023-2024թ. ուստարվա վարձավճարը՝

1. <<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 ՄԵԴ>> ՀՈԱԿ հաճախող երեխաներ՝

1.Սարգսյան Անգելինա /Լուսակունք/

2. Սարգսյան Իռեն /Լուսակունք/

3.Սարգսյան Ալեն /Լուսակունք/

4.Գասպարյան Գևորգ /Լուսակունք/

5.Եղիազարյան Նարեկ /Լուսակունք/

6.Պետրոսյան Նարե /Այրք/

7.Պետրոսյան Աիդա/Այրք/

8.Պետրոսյան Արման/Այրք/

9.Մանուկյան Ահարոն/Շատվան/

10.Առաքելյան Անահիտ/Շատվան/

11.Գավալյան Միլենա/ Շատվան/

12.Իսկոյան Վիկա /Շատջրեք/

13. Նալբանդյան Ռուզաննա /Շատվան/

14.Մանուկյան Նորա/Շատվան/

15.Ասլանյան Արման Արեգունի/

16.Հակոբյան Դանիել/Ծովակ/

17. Հակոբյան Արմեն /Վարդենիս/

18. Հոխանյան Նարե/Վարդենիս/

19. Ղազարյան Հայկ /Վարդենիս/

20. Ղազարյան Հենրի /Վարդենիս/

21. Ժամհարյան Տիգրան /Վարդենիս/

22. ԽաչատրյանՀայկուհի/Վարդնիս/

23. Վարդան Սեմանուկյան/Վարդենիս/

24.Համբարձումյան Վիկտորիա/Վարդենիս/

25.Կոլոտյան Արեգ/Վարդենիս/

26.Կոլոտյան Նարեկ/Վարդենիս/

27.Մինասյան Ջուլիետա/Վարդենիս/

28.Ավետիսյան Սյուզաննա /Վարդենիս/

29.Ավետիսյան Սոնա/Վարդենիս/

30.Կարեյան Ահարոն/Խաչաղբյուր/

31.Կարապետյան Ջուլիաննա/Վարդենիս/

32.Խաչատրյան Մարկոս/Վարդենիս/

33.Կարապետյան Գևորգ/Վարդենիս/

34.Զաքոյան Արամայիս/Վարդենիս/

35.Սարգսյան Միլենա/Վարդենիս/

36.Կարապետյան Կառլեն/Վարդենիս/

37.Ժամհարյան Միլենա/Վարդենիս/

2.<<<< Գեղարքունիքի մարզ ի վարդենիս քաղաքի թիվ 2 ՄԵԴ >>ՀՈԱԿ հաճախող երեխաներ՝

1.Թովմասյան Ելենա /Վարդենիս/

2.Բարսեղյան Կարինա /Վարդենիս/

3.Զաքոյան Մանե /Վարդենիս/

4.Զաքոյան Մոնիկա /Վարդենիս/

5.Զաքոյան Մոնթե/Վարդենիս/

6.Ղասաբյան Հասմիկ/Վարդենիս/

7.Ղասաբյան Մանե/Վարդենիս/

8.Հոխանյան Ալեն/ վարդենիս/

9.Հոխանյան Մանվել/Վարենիս/

10.Մկրտչյան Քնարիկ/վարդենիս/

11.Խաչատրյան Արամ/Վարդենիս/

12.Խաչատրյան Հունան/Վարդենիս/

13.Մանուկյան Մերի/Վարդենիս/

14.Պողոսյան Սարգիս/Վարդենիս/

15.Դավեյան Արման/Վարդենիս/

16.Ավետիսյան Լուսինե /Վարդենիս/

17.Գևորգյան Մանե/Վարդենիս/

18.Գևորգյան Բաղդասար/Վարդենիս/

19.Անյուտա Ղասաբյան/Վարդենիս/

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը՝ պարզաբանելով, որ դպրոցներում սովորում են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ, ովքեր չեն կարողանում վճարել ուսման վարձերը: Համայնքապետարանի կողմից կատարվել են ուսումնասիրություններ, առկա են արձանագրությունները: Առաջարկեց զիջել վարձավճարները:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 165-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՇԱՀԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ BMW ՄԱԿՆԻՇԻ 99PV995 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՄՆԱԿԻ ՉԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՇԱՀԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ BMW ՄԱԿՆԻՇԻ 99PV995 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 438311 /չորս հարյուր երեսունութ հազար երեք հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել՝ 210261 /երկու հարյուր տաս հազար երկու հարյուր վաթսունմեկ/ ՀՀ դրամ տույժի գումարը մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը: Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 164-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՆԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳԱԶ 24 ՄԱԿՆԻՇԻ 35LS054 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՄՆԱԿԻ ՉԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՆԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳԱԶ 24 ՄԱԿՆԻՇԻ 35LS054 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 121 117 /մեկ հարյուր քսանմեկ հազար հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով 31000 /երեսունմեկ հազար/ ՀՀ դրամ զիջել՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո :

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը: Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 163-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76, 77 և 94-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության

օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է՝ թույլատրել համայնքի ղեկավարին.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի սեփականություն հանդիսացող 05-008-0216-0003 ծածկագրով 1.0հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի սեփականություն հանդիսացող 05-008-0216-0004 ծածկագրով 0.33668հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

3. Հաստատել վարձակալության տրամադրվող 2-րդ կագի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 7400 (յոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը՝ պարզաբանելով, որ աշխատանքներ են տարվում հողեր օգտագործող, սակայն պայմանագրեր չունեցող բնակիչներին հայտնաբերելու և օրինական դաշտ բերելու ուղղությամբ:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 162-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վարդենիս համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի 1-ին փողոց 35 հասցեի (ծածկագիր 05-051-0018-0040, սեփականության իրավունքի վկայական 16112023-05-0033) 0,37հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:
1.1 Մեկնարկային գինը սահմանել, կադաստրային արժեքի 1քմ-ի համար 550 (հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ (16-րդ գոտի):

2.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Խ. Ստեփանյան փողոցի 16/3 հասցեի (ծածկագիր 05-005-0087-0174, սեփականության իրավունքի վկայական 01092023-05-0013) 0.007հա բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:
1.1 Մեկնարկային գինը սահմանել, կադաստրային արժեքի 1քմ-ի համար 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ (15-րդ գոտի):

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը: Առաջարկություններ և առարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 14 կողմ, 0 դեմ, 7 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 161-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԼԵՌՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ 76/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել Վարդենիս համայնքի ղեկավարին՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Վարդենիս քաղաքի Լեռնագործների փողոցի 76/1 հասցեի՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբեկտների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության 1.8898հա հողամասը (սեփականության իրավունքի վկայական՝ 02112023-05-0076)՝ համայնքի աղբահանություն իրականացնելու համար անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել "Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում" ՀՈԱԿ-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ընդմիջումից հետո ավագանու անդամներ Սևակ Սիմոնյանը, Արմինե Աղաջանյանը և Մելանյա Եփրեմյանը չեն մասնակցել հաջորդ հարցերի քննարկմանը:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը՝ պարզաբանելով, որ հողամասը տրամադրվում է ՀՈԱԿ-ին լիցենզիա ստանալու համար:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 160-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՐՖԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 4/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՐՖԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ՀՐԱՇՔ ՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի Տորֆավան բնակավայրի 1-ին փողոց 3-րդ նրբաբցք թիվ 4/1 հասցեի 05-089-0021-0024 ծածկագրով 0.04758հա հողամասը, 97.4քմ մակերեսով մանկապարտեզը և 3.3քմ, 3.8քմ պարիսպները անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՐՖԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ՀՐԱՇՔ ՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ին:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը ներկայացնելով, որ հողամասը անհրաժեշտ է անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել մանկապարտեզին, որպեսզի հնարավոր լինի լիցենցիա ստանալ:

Քվեարկության արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Հայտարարվեց 15 րոպե ընդմիջում:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 159-Ա/

Լսեցին

ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ <<ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ>> ԹԻՎ 1325 ԲԱՆԱՁԵՎԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2024ԹԹ ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏՅՈՄ ՄԿՐՏՉՅԱՆ/

Հայաստանի Հանրապետությունը մշակել է Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի <<Կանայք, խաղաղություն և անվտանգություն>> թիվ 1325 բանաձևի իրականացման վերաբերյալ գործողությունների ազգային երկրորդ ծրագիրը: Ծրագիրը ներկայացնում է ճգնաժամային իրավիճակում հայտնված կանանց և աղջիկների խնդիրները՝ անդրադառնալով դրանց անվտանգության բաղադրիչներին: Առանձին մատնանշում են բռնի տեղահանված կանանց խնդիրները: Ծրագիրը կարևորում է կանանց մասնակցությունը պաշտպանության համակարգում, ընդգծում է տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավման անհրաժեշտությունը՝ տեղերում ապահովելու համար ծրագրի դրույթների արդյունավետ իրականացումը: 2023 թվականին Արմավիրի զարգացման կենտրոնի կողմից, ներառական մասնակցության սկզբունքով, մշակվեց ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ <<ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ>> N 1325 ԲԱՆԱՁԵՎԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, որը համապատասխանում է ՀՀ կողմից մշակված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի իրականացման վերաբերյալ գործողությունների ազգային երկրորդ ծրագրի ռազմավարական ուղղություններին և առաջարկում է տեղայնացված նպատակներ ու գործողություններ՝ հիմնված Վարդենիս համայնքի և տեղական կանանց հատուկ կարիքների և առաջարկությունների վրա: Այն ընդգրկում 2 տարվա ժամանակահատված: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Միացյալ ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի <<Կանայք, խաղաղություն և անվտանգություն>> թիվ 1325 բանաձևի դրույթների իրականացման 2023-2024թթ տեղական գործողությունների ծրագրին և արդյունավետ աշխատանք տանել Վարդենիս համայնքում ծրագրով նախատեսված խնդիրների իրականացման, կանանց և աղջիկների հատուկ պաշտպանություն ապահովել պատերազմների, արտակարգ իրավիճակների և համաճարակների և դրանց ռիսկերի դեպքում:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը պարզաբանելով, որ մանկապարտեզները համալրվել են նոր տեխնիկաներով, որոնց անհրաժեշտությունը եղել է մանկապարտեզներում: Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Մելանյա Եփրեմյանը ներկայացնելով, որ քաջ ծանոթ է Արմավիրի զարգացման կենտրոնի գործունեությանը և ողջունելով նախաձեռնությունը՝ առաջարկեց հաստատել

հարցը:
Քվեարկության արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 158-Ա/

Լսեցին
2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏՅՈՄ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ 6-րդ և 25-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է

Համաձայնություն տալ 2024 թվականի ընթացքում Վարդենիս համայնքում նպատակային հետևյալ սուբվենցիոն ծրագրերի իրականացմանը՝

1.Վարդենիս քաղաքի 10 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում:

2. Վարդենիս համայնքի Փամբակ, Արփունք, Ծովակ, Խաչաղբյուր, Ավազան, Ակունք, Կարճաղբյուր, Լճավան բնակավայրերում լուսավորության ցանցի կառուցում:

3.Վարդենիս համայնքի Վարդենիսի թիվ 1, թիվ 2, Ակունք և Նորակերտ բնակավայրերի մանկապարտեզների կապիտալ նորոգում:

4.Վարդենիս խոշորացված համայնքի Վարդենիս քաղաքի՝ Լ. Ազգալդյան, Երիտասարդության, Հ.Անդրեասյան, Իսակովի, Վ. Մամիկոնյան, Գործարանային փողոցների ասֆալտապատում, Ակունք, Կարճաղբյուր, Ծովակ, Մեծ Մասրիկ, Լուսակունք բնակավայրերի կենտրոնական փողոցների ասֆալտապատում:

5.Վարդենիս համայնքի Արցախյան պատերազմի զոհերի հիշատակի հուշահամալիրի կառուցում, Վարդենիս քաղաքի Լ. Ազգալդյան, Երիտասարդության և Վ. Մանուկյան խաչմերուկի պուրակի կառուցում, Վարդենիսի Գ. Կարապետյանի անվան զբոսայգու բարեկարգում, Վարդենիսի Սբ. Վարդան կոչվող տարածքի բարեկարգում:

6.Վարդենիս համայնքի Ծովակ, Սոթք, Ջաղացաձոր, Փոքր Մասրիկ, Կուտական, Գեղամաբակ բնակավայրերում ոռոգման ջրի ջրագծերի և խորքային հորերի կառուցում կամ վերակառուցում:

7.Վանեվան, Տորֆավան, Գեղամասար, Ծովակ և Նորակերտ բնակավայրերի գազաֆիկացում:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը:
Առաջարկությամբ հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը նշելով, որ նախագծի 7-րդ կետում, որտեղ նախատեսել ենք Վանեվան, Տորֆավան, Ծովակ և Նորակերտ բնակավայրերի գազաֆիկացումը, այս հարցի շուրջ առաջարկվեց համապատասխանեցնել հնգամյա ծրագրին և ներկայացնել նաև Նորակետ, Փոքր Մասրիկ, Գեղամասար բնակավայրերի գազաֆիկացումը, հասկանալի է, որ գազատարը Նորակերտ հասնելու համար կանցնի Փոքր Մասրիկով, այս դեպքում Գեղամասար բնակավայրը դուրս է մնացել, առաջարկեց համապատասխանեցնել հաստատված և քվեարկված ծրագրին: 6-րդ կետով առաջարկվեց, որպեսզի Գեղամասար բնակավայրում այս տարվա իրականացված սուբվենցիոն ծրագրերը, որոնք շուտով կհանձնվեն շահագործման որոշակի շտկումներ մտցվեն, որովհետև անհատ մարդիկ կան, որոնք ջրօգտագործման թույլտվություն չունեն, բայց սեփական կապտաժներից են օգտվում, նրանք նույնպես ցանկություն են հայտնել միանալու կենտրոնացված ջրաֆիկացմանը և առաջարկել են, որ իրենց սեփական կապտաժները միացնեն ջրագծին և բոլորը դառնան միասնական մեկ համակարգի

մասնիկ, այդ առումով առաջարկվեց, որ փոքրիկ դրենաժային համակարգ կառուցվի և մոտ մեկ կմ երկարությամբ մոտ երկու դույմանոց տրամաչափի խողովակաշարով արտաքին ցանցը նույնպես ներառվի 6-րդ կետում:
Ավազանու անդամ Հայկ Երանոսյանը հարց ուղղեց աղյո՞ք Ավազան բնակավայրը դուրս է մնալու գազաֆիկացման այս ծրագրից, որին ի պատասխան համայնքի ղեկավարը նշեց, որ Ավազան բնակավայրի և մնացած չգազաֆիկացված բնակավայրերի հարցը կընդգրկվի 2024-2025թթ սուբվենցիոն ծրագրերում:
Հարց հնչեցրեց ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը թե ո՞ր բազմաբնակարան շենքերն են ներառված սուբվենցիոն ծրագրի մեջ, ինչին ի պատասխան համայնքի ղեկավարը նշեց, որ ընդամենը մնացել է 16 շենք, որոնցից 10-ը որոնք ամենաանմխիթար վիճակում են գտնվել ընդգրկվել են ծրագրում: Հարցին ի պատասխան թե արդյո՞ք բանավան թաղամասից են շենքերը համայնքի ղեկավարը և առաջին տեղակալը պատասխանեցին, որ Վարդենիսից 3 շենք է մնացել, որը ընդգրկվել է իսկ մնացածը բանավան թաղամասից է: Մյուս տարվա համար բանավան թաղամասից մնում է ընդամենը վեց շենք: Հարցի երկրորդ կետի վերաբերյալ ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը հարց ուղղեց Վարդենիս քաղաքի չլուսավորված փողոցների և թաղամասերի լուսավորության հետ կապված, որին ի պատասխան համայնքի ղեկավարը հայտնեց, որ առաջիկա 2024-2025թթ սուբենցիոն ծրագրում կներառվի նաև այդ հարցը և միաժամանակ հայտնեց, որ բնակավայրերում ևս լուսավորվելու են միայն կենտրոնական փողոցները:
Ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը հարց ուղղեց Վարդենիսի Սբ. Վարդան կոչվող տարածքի բարեկարգման մասին, թե ինչպես է արվելու աշխատանքները և ինչ սկզբունքով: Կարեն Մկրտչյանը իր պատասխանում նշեց, որ հայտարարվելու է նախագծման մրցույթ, կլինի հանրային լսում, որին կարող են մասնակցել բնակիչները ինչպես նաև ավագանիները: Նաիրա Մանուչարյանը իր խոսքում նշեց, որ բոլորն էլ մեր համայնքի բնակավայրերն են սակայն նա նկատում է խտրականություն Գեղամասար բնակավայրի հետ կապված՝ նշելով, որ շրջանցվում է Ավազան բնակավայրը և ընդգրկվում է Գեղամասարը: Ի պատասխան Մանուչարյանի խոսքի համայնքի ղեկավրը նշեց, որ երբևէ խտրականություն չի եղել, ինչպես նաև ելույթ ունեցավ Դավիթ Շահնազարյանը նշելով, որ հղում է կատարել Վարդենիս համայնքի ավագանու կողմից հաստատված հնգամյա զարգացման ծրագրին, այսինքն առաջարկվել է իրագործել ավագանու կողմից հաստատված ծրագիրը:
Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Վարդան Մարգարյանը՝ առաջարկելով գազատարը անցկացնել կենտրոնական ճանապարհով, որպեսզի հետագայում ավելի հեշտ լինի մյուս բնակավայրերն էլ միացնել: Համայնքի ղեկավարը նշեց, որ տվյալ գործողությունը կիրականացվի նախագիծ-նախահաշիվ կազմելու ընթացքում:
Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Սպարտակ Հովհաննիսյանը նշելով, որ Լճավան բնակավայրում բացակայում է ինքնահոս խմելու ջուրը, խոստացվել է 2024 թվականի սուբվենցիոն ծրագրում ներառել, ի պատասխան Կարեն Մկրտչյանը ներկայացրեց, որ Լճավան բնակավայրի խմելու ջրի ծրագիրը արդեն 2023 թվականին հաստատված է սուբվենցիաների ցանկում և 2024 թվականին իրականացվելու է ծրագիրը:

Քվեարկության արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 157-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ. „ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ„ N 133-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏՅՈՄ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի ավագանու 26 դեկտեմբերի 2022 թվականի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 133-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը ներկայացրեց երրորդ հարցը և նշեց, որ իրենք արդեն բազմիցս քննարկել են տվյալ որոշումը և միայն միջնաժամկետ ծրագրերի փոփոխություն են ներառել հնգամյա ծրագրում և առաջարկեց առարկությունների ու առաջարկությունների բացակայության դեպքում հարցը դնել քվեարկության:

Հարցը դրվեց քվեարկության՝ արդյունքում 14 կողմ, 0 դեմ, 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 156-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԸՍՏ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Վարդենիս համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի 2024-2026թթ բյուջեների վարչական և ֆոնդային մասերի եկամուտները ըստ ձևավորման աղբյուրների:

Համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը ներկայացրեց օրակարգի երկրորդ հարցը և տվեց պարզաբանում հարցի շուրջ:

Հարցի վերաբերյալ հանդես եկավ ավագանու անդամ Կարեն Սիմոնյանը, և նշեց որ ինքը նայելով հավելվածներին, տեսնում է, որ ընդհանուր եկամուտների և ընդհանուր ծախսերի մասով. ծախսերը գերազանցում են եկամուտները, դիֆիցիտի խնդիր է առաջանում, իսկ աշխատակազմի ֆինանսական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս. Գրիգորյանը պատասխանեց, դիֆիցիտը փակվելու է տարեվերջյան մնացորդներով, որ մնացորդները ուղղվելու են ծախսերին:

Հարցը դրվեց քվեարկության, արդյունքում 13 կողմ, 0 դեմ, 10 ձեռնպահ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 155-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Վարդենիս համայնքի 2023թ. համար հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Հիմք ընդունելով Վարդենիս համայնքի թիվ 1 Մանկական Երաժշտական Դպրոցի տնօրենի գրություն հիմնավորումը,հաստատված նախահաշվից ավել գումարի պահանջով,թույլատրել համայնքի ղեկավարին բյուջեի 01.06.01.51 գործառնական դասակարգման 4216 և 4239 տնտեսագիտական դասակարգման հոդվածներից պակասեցնել համապատասխանաբար 2000,0 Հ/Դ և 2430,0 Հ/Դ , ընդամենը՝4430,0 Հ/Դ, այն ավելացնել Վարդենիս համայնքի թիվ 1 Մանկական Երաժշտական դպրոցի նախահաշվին: Միաժամանակ ,Վարդենիս համայնքում ամանորյա միջոցառումներ անցկացնելու նպատակով,թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի պահուստային ֆոնդից 12 000,0 հազ.դրամ գումար հատկացնել տոնակատարության կազմակերպման համար:

2.Գյումրու երիտասարդների նախաձեռնության խումբ, դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրում գազային հակակարկտային կայան կառուցելու համար հատկացվելիք 2700,0 հազ դրամ գումարի ծախսման նպատակով,թույլատրել համայնքի ղեկավարին բյուջեի եկամտային 38,02 դասակարկմամբ բաժնում ավելացնել 2700,0 հազ.դրամ իսկ ծախսային մասում այն ավելացնել բյուջեի ֆոնդային մասում 01.06.01.51 գործառնական դասակարգման 5112 տնտեսագիտական դասակարգման հոդվածին 2400,0 հազ.դրամ 5129 տնտեսագիտական դասակարգման հոդվածին 300,0 հազ.դրամ: Եկամուտների ճշգրտման նպատակով ,պակասեցնել այլ ոչ հարկային եկամուտներ 28,50 դասակարգումով ստացված 26052,0 հ/դ եկամուտը և այն տեղափոխել եկամուտների 37,09 դասակարգման բաժին,որպես՝ պետական բյուջեից ընթացիկ ծախսերի համար այլ դոտացիաներ: Ելնելով անհրաժեշտությունից թույլատրել համայնքի ղեկավարին 1,1,1,51 գործառնական դասակարգման 4269 տնտեսագիտական հոդվածից պակասեցնել 500,0 հ/դ և այն ավելացնել նույն դասակարգման 4221 տնտեսագիտական հոդվածին:

3.Մկների և այլ վնասատու կրծողների դեմ պայքարի նպատակով թունանյութ պատրաստելու համար ցորենի և ձեթի գնումն իրականացնելու հրատապության անհրաժեշտությունից ելնելով թույլատրել համայնքի ղեկավարին նշված ապրանքատեսակների գնումը կատարել մեկ անձից:

Համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը ներկայացրեց օրակարգի առաջին հարցը՝ նշելով, որ Վարդենիս համայնքի թիվ 1 Մանկական Երաժշտական դպրոցի նախահաշվին գումար ավելացնելու հիմնական պատճառը լուսամուտների վերանորոգման արդյունքում առաջացած խնդիրներն են, ինչի արդյունքում էլ ծախսեր են ավելացել: Իսկ ամանորյա միջոցառումների անցկացման նպատակով հատկացվելիք 12 մլն. գումարի մասով համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը պարզաբանեց, որ 12 միլիոնը դա ֆիքսված թիվ չէ, գումարի չափը կարող է տատանվել, կախված՝ մրցույթում ով կհաղթի և որքան գումարի դիմաց կիրականացվեն աշխատանքները: Համայնքի ղեկավարը հավելեց, որ բոլորին հայտնի պատճառներով նախորդ տարի ամանորին քաղաքը չի զարդարվել, սակայն այս տարի որոշել են հանուն համայնքի բնակիչների, համայնքի զարգացման, Արցախահայերի ընտանիքների ու փոքրիկների քաղաքը զարդարել ու միջոցառումն իրականացնել:

Ավագանու անդամի կողմից հարց հնչեցվեց համայնքի ղեկավարին թե արդյոք կա մոտավոր նախագիծ ամանորյա լուսավորության ու միջոցառումների հետ կապված, իսկ համայնքի ղեկավարը պարզաբանեց, որ մրցույթից հետո կկանչեն դիզայներ, չափումներ կիրականացնեն, որից հետո էլ պարզ կլինի աշխատանքի հետագա ընթացքը:

Հարցի հաջորդ կետի հետ կապված համայնքի ղեկավարը պարզաբանեց, որ 2 մլն. 400 հազար դրամը ծախսվել է հակակարկտային կայանի ստեղծման համար, 300 հազար դրամը տրամադրվել է գեներատոր գնելու համար:

500 հազար ՀՀ դրամի հետ կապված համայնքի ղեկավարը նշեց, որ դա գործուղման ծախս է:

Համայնքի ղեկավարը նշեց, որ մկների ու կրծողների դեմ պայքարի համար մարզպետարանից արդեն թունաքիմիկատ են ստացել և անհրաժեշտ է գնել 5 տոննա 200 կգ ցորեն և 260 լիտր ձեթ՝ գրավչանյութ պատրաստելու և վարչական ղեկավարներին տրամադրելու համար: Իսկ ընդհանուր ծախսերը դեռ հստակ չեն, քանի որ դեռ պետք է հաշիվ կախեն, որպեսզի կարողանան գնում կատարել: Ավագանու անդամ Կարեն Սիմոնյանը դիմեց համայնքի ղեկավարին, պնդմամբ, որ համայնքի ղեկավարի նշած կետերից միայն առաջինն կետն է եղել նախագծի մեջ, իսկ մնացած կետերից իրենք տեղյակ չեն եղել: Համայնքի ղեկավարը պարազաբանեց, որ օրինակ կրծողների հետ կապված այդ կետի մասին գրությունը ստացել են ավագանու նիստի նախորդ օրը, ինչի հետևանքով էլ հարցի այդ կետը առաջին հարցի նախագծում չի ներառվել, և քանի որ , եթե սպասեն հերթական նիստին բավականին ժամանակ կանցներ և ծրագիրը չէր իրականանա, այսպիսով ինքը այդ կետը լրացուցիչ ավելացնում է հարցի մեջ: Իսկ ավագանու անդամ Սիմոնյանը պատասխանեց, որ իրենք պատրաստ են աջակցել ցանկացած հարցի, որը շտապ լուծում է պահանջում և վերաբերվում է համայնքին կամ որևէ խնդրին, սակայն այստեղ ինքն անտեղյակություն է նկատում,պատճառը պարզ է, սակայն խնդիրը ոչ թե հարցի պարզ կամ ոչ պարզ լինելն է, այլ այն, որ նախագծում այդ կետերը ընդգրկված չեն եղել: Իսկ ֆինանսական մասի երկրորդ կետի մասով հարցրեց, թե բովանդակային մասը ինչու ընդգրկված չէ հարցի մեջ, և եթե կան համապատասխան պատճառաբանություններ կամ հիմնավորումներ կամ արձանագրություն, ապա ինչու է ընդգրկված զուտ չոր ֆինանսը, և ոչ թե համապատասխան փաստաթուղթ, որով հասկանալի լինի, թե խոսքն ինչի մասին է: Վարդենիսի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանին և աշխատակազմի քարտուղար Կամո Զարոյանին դիմեց, որ ինքը կրկին դիմել է այս հարցով, որպեսզի նախագծերում մանրամասնեն և ինֆորմացիա տան, որպեսզի ինքը հարցեր չտա՝ կապված դրա հետ: Ամանորյա միջոցառումների հետ կապված ավագանու անդամ Սիմոնյանը հարցրեց, թե 12 միլիոնի հետ կապված արդյո՞ք նախապես միջոցառումների կմախքը չի գծվել, թե սկզբից մրցույթ է լինելու, նոր մնացածը: Համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը խոսքը փոխանցեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանին, ով էլ նշեց, որ ամանորյա զարդարանքի հետ կապված թե՛ նախագիծն է առկա, թե՛ տեխնիկական բնութագիրը, մրցույթը՝ հայտարարված է, դիզայները՝ հրավիրված է: Կարեն Մկրտչյանը նշեց, որ ավագանու անդամը կարող է նաև մուտք գործել gnumner.am և տեսնել թե՛ նախագիծը, թե՛ նախահաշիվը և թե՛ ծավալաթերթերը: Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանը նաև ընդհանուր պարզաբանում տվեց հարցի նախագծում որոշակի փաստաթղթերի բացակայության վերաբերյալ և նշեց, որ դա պարզապես տեխնիկական թերություն է և ավագանու անդամ Սիմոնյանի դիտողությունը տեղին է: Կարեն Մկրտչյանը ներկայացրեց նաև Վարդենիսի թիվ 1 ՄԵԴ ՀՈԱԿ տնօրենի գրությունը կապված աշխատակիցների աշխատավարձերի և շինարարական աշխատանքների հետ:

Հարցը դրվեց քվեարկության՝ արդյունքում 13 կողմ, 0 դեմ, 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանի հարցին, թե ստացվում է, որ նրանք դեմ են Ամանորին քաղաքի զարդարմանը, կամ հարցի մնացած կետերին, ավագանու անդամ Սիմոնյանը պատասխանեց, որ այստեղ կա մի նրբություն, կարելի էր հարցերը մասնավորեցնել, և ոչ թե մեկ հարցի տակ չորս հարց ընդգրկել, իսկ ինքը ընդհանուր առմամբ ամանորյա միջոցառումներին կողմ է: Խոսքով հանդես եկավ նաև ավագանու անդամ Երանոսյանը, նշելով, որ կարելի էր գոնե կետերով առանձնացնել հարցի բովանդակության մեջ, իսկ համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանն ու համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կ. Մկրտչյանը պարզաբանեցին, որ տեղափոխությունը վերաբերվում էր միևնույն հոդվածին, այդպիսով հնարավոր չէր երկրորդ կետ լինել:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 154-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել՝ 2023 թվականի նոյեմբերի 29-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած 13 հարցից.

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԸՍՏ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ. „ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ„ N 133-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ <<ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ>> ԹԻՎ 1325 ԲԱՆԱՁԵՎԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2024ԹԹ ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

6.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՐՖԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 4/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՐՖԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ <<ՀՐԱՇՔ ՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԼԵՌՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ 76/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՆԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳԱԶ 24 ՄԱԿՆԻՇԻ 35LS054 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՇԱՀԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ BMW ՄԱԿՆԻՇԻ 99PV995 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԵԴ>> ՀՈԱԿ ԵՎ <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ 2 ՄԵԴ>> ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՁԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

13.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը մինչև օրակարգին անցնելը ներկայացրեց Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին տրամադրված օգնությունների մասին հաշվետվություն՝ նշելով, որ առաջին անհրաժեշտության ապրանքներ արդեն ստացել են գրեթե բոլորը, այսպիսով փոխել ենք աջակցության տեսակը, անցել ենք հերթական գործողություններին, որոնք կնպաստեն արցախահայերի Վարդենիս համայնքում հիմնական բնակություն հաստատելու համար: Համայնքի ղեկավարը անվանական ներկայացրեց ապրանքների ցանկը, որոնք տրամադրվել են արցախահայերին՝ մի շարք կազմակերպությունների և անհատների կողմից:
Համայնքի ղեկավարը անդրադարձավ 2023 թվականի ընթացքում համայնքի տարածքում իրականացված սուբվենցիոն ծրագրերին՝ նշելով, որ շինարարությունների մեծ մասն արդեն ավարտվել է, մնացածի մասով հույս հայտնեց, որ մինչև տարեվերջ բոլոր աշխատանքները կավարտվեն:

2023 թվականի նոյեմբերի 29-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 24-ը, բացակայում էին <<Քաղաքացիական պայմանագիր>>

խմբակցության ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը, Արտակ Մանուկյանը և Ռոմելյա Սարգսյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Նիստին մասնակցում էին աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը, աշխատակազմի կրթության, մշակույթի սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ Աննա Վարդանյանը, քաղաքաշինության հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ Աբգար Աբգարյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Էդգար Պետրոսյանը և հրավիրված այլ անձինք: Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգի հարցերը և առաջարկեց 10-րդ հարցից հետո որպես լրացուցիչ հարց ավելացնել Մեծ Մասրիկ բնակավայրի բնակիչ Շահեն Մանուկյանի դիմումը՝ ավտոմեքենայի ապառքի գիջման վերաբերյալ:

Քվեարկության արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ օրակարգը հաստատվեց:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 153-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱԶՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՁԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կամո Զարոյանը _____